

ՔԱՐՈՋԵՍԱԿԱՆ

**ՆԵՐՍԵՎ ՎՐԴ. ԱՆՈՅԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՆ
(24 Մարտ, 2024)**

**«Օրէնքը արդարեւ իմար չէ, այլ՝ անօրէններուն եւ անհնազանդներուն...»:
(Ա. Տիմ. 1:9)**

Պօղոս առաքեալ Տիմոթէոսին ուղղուած իր այս խօսքին մէջ շեշտը կը դնէ անհր-
նազանդութեան վրայ: Աստուածաշունչի Ծննդոց գիրքին մէջ կը կարդանք, թէ Աստ-
ուած ստեղծեց մարդը՝ Ադամը, ապա անոր կողոսկրէն կինը՝ Եւան: Հոս կարեւորը ոչ թէ
կողոսկրն է, այլ կնոջ ստեղծումը, որպէս յարմարագոյն ընկեր եւ կենակից տղամար-
դուն: Կողոսկրը միեւնոյն երկրորդական արժէքն ունի, ինչ որ մարդուն հոգէն կազմը-
ւած ըլլալու հանգամանքը: Աստուած չստեղծեց կինը մարդուն գլուխէն, որպէսզի ան
ընտանիքի գլուխը չըլլայ, ոչ ալ մարդուն ոտքէն, որպէսզի ամուսնոյն ստրուկը չդառ-
նայ, այլ Աստուած ստեղծեց կինը մարդուն կողոսկրէն, որպէսզի ան ըլլայ ամուսնոյն
սրտակիցը, ինչպէս որ կողոսկրը մարդու սրտին ամէնէն մօտիկ անդամն է: Ապա Աս-
տուած անոնց դրաւ Եդեմական պարտէզին՝ դրախտին մէջ, որպէսզի մշակեն եւ պա-
հեն գայն: Պատուիրեց օգտուիլ բոլոր ծառերու պտուղներէն, սակայն արգիլեց անոնց
ուտել բարու եւ չարի գիտութեան ծառէն: Այսինքն՝ Աստուած մարդուն համար օրէնք
մը հաստատեց:

Երբ օրէնքով բան մը կ'արգիլուի մարդու մը, կը նշանակէ թէ ան ազատ է եւ կըր-
նայ այդ արգիլուածը կատարել: Ադամ ազատ էր Եդեմական պարտէզի բոլոր ծառերու
պտուղներէն ուտելու: Սակայն, երբ Աստուած կ'արգիլէ մարդը ուտել բարու եւ չարի
գիտութեան ծառէն, կ'ըսէ նաեւ թէ ինչ պիտի պատահի պատուիրանազանցութեան
պարագային. ան անպայման պիտի մեռնի: Չ'ըսէր, թէ մարդը ինչո՞ւ պիտի չուտէ ատ-
կէ, այլ կը նշուի միայն, թէ ատկէ ուտելը գէշ հետեւանքներ պիտի ունենայ: Այսպիսով՝
մարդը չիմանար, թէ ինչ է այդ ծառին վտանգաւոր յատկութիւնը, այնպէս, ինչպէս
երեխայ մը չիմանար, թէ ինչու իր հայրը այս կամ այն բանը կ'արգիլէ իրեն: Այս կը
նշանակէ, թէ ազատ կամքով օժտուած մարդը պէտք է խոնարհի իր արարիչ Աստուծոյ
վեհութեան առջեւ եւ առանց սակարկութեան անսայ աստուածադիր օրէնքներուն:

Օրէնք դնողը կամ երեխային հայրը գիտէ, թէ իր դրած արգելքը իր զաւկի օգ-
տին համար է: Օրէնքնով, պատուէրներ տալով հայրը կ'ուզէ որ իր զաւակը կապուած
ըլլայ իրեն եւ ընտանիքին եւ վատ ճանապարհով չընթանայ: Նոյնպէս եւ Աստուած,
սիրելիներ, իր պատուիրաններով եւ օրէնքներով կ'ուզէ պահել մարդը իր հետ ներ-
դաշնակ յարաբերութեան մէջ:

Երբ մարդ մը «ոչ» կ'ըսէ Աստուծոյ պատուիրաններուն, կը նշանակէ թէ ան «ոչ»
կ'ըսէ նաեւ Աստուծոյ: Երբ մարդ մը «ոչ» կ'ըսէ Աստուծոյ, «ոչ» կ'ըսէ նաեւ կեանքին,

որովհետեւ կեանքը Աստուծոյ կու գայ: Այս իմաստով պէտք է հասկնալ մահանալու վտանգը, որպէս հետեւանք պատուիրանագանցութեան, որը սպառնալիքէ աւելի զգուշացում մըն է:

Այնուհետեւ Աստուածաշունչը կը նկարագրէ մարդուն փորձութիւնը, թէ ինչպէս Աստուծոյ ստեղծած բոլոր գազաններէն իմաստնագոյնը՝ Օձը, երկխօսութեան մէջ կը մտնէ առաջին կնոջ՝ Եւային հետ: Օձը ինչպէս Սուրբ Գիրքի, այնպէս ալ առասպելներու մէջ միշտ չէ, որ ժխտական իմաստով հանդէս կու գայ: Ան խելացի է, եւ անոր խելացիութիւնը որպէս օրինակելի կը բնութագրուի նոյնիսկ մեր Տէր Յիսուս Քրիստոսին կողմէ (Մատթ. 10:16): Առասպելներու մէջ ան ունի կեանք եւ մահ տալու յատկութիւն: Քանանացիներու պտղաբերութեան եւ սիրոյ աստուածուհի Կադէշ ներկայացուած է մերկ, առիւծի մը վրայ նստած եւ ձեռքին մէջ երկու օձեր բռնած: Իսկ ուրիշ տեղ մը Սուրբ Գիրքին մէջ (Թիւք 21:9) օձը փրկութեան խորհրդանիշ կը դառնայ, երբ համաձայն Աստուծոյ պատուէրին, Մովսէս մարգարէ պղնձէ օձ մը կը դնէ իր գաւազանին վրայ, եւ անոնք, որոնք կը նային օձին՝ կը բժշկուին անոր խայթոցէն: Կենդանիներու խօսակցութեան կը հանդիպինք միայն հէթիաթներու եւ առասպելներու մէջ, Սուրբ Գիրքի մէջ ալ խօսող օձը միեւնոյն պատկերաւոր կամ այլաբանական հանգամանքով հանդէս կու գայ եւ իր գէշ մտադրութիւնը սուտով կը սկսի իրագործել: Անոր գլխաւոր գէնքը սուտն է, որովհետեւ ինչպէս կ'ըսէ Յովհաննէս Աւետարանիչ «Անոր մէջ ճշմարտութիւն չկայ» (Յովհ. 8:44):

Երբ փորձիչը կը գայթակղէ Եւան, կը շարժէ անոր հետաքրքրութիւնը եւ կը յաջողի խաղատիկնիկ, մարիոնետ դարձնել անոր, վերջինս կը տեսնէ, թէ լաւ է ծառէն ճաշակելը, եւ թէ ծառը չքնաղ տեսք ունի, ինչպէս նաեւ իմաստուն ընելու գրաւչութիւն, կ'առնէ անոր պտուղը եւ կ'ուտէ, ապա կը հրամցնէ Ադամին՝ ան ալ կ'ուտէ (Ծնն. 6): Եւ կը բացուին երկուքի աչքերն ալ եւ կը զգան, թէ մերկ են: Անմիջապէս թզենի տերեւներ իրարու կը միացնեն եւ ատոնցմով կը ծածկեն իրենց մերկութիւնը: Մեղանշումէն յետոյ յօդս կը ցնդին նախամարդուն յոյսերը: Փորձիչը ըսած էր անոր, թէ Աստուծոյ նման իմաստուն պիտի ըլլար, սակայն անոր ձեռք ձգած իմաստութիւնը երջանկութիւն չի տար, այլ ատորմով նախամարդը կը զգար իր մերկութիւնը եւ ատկէ կը սկսի ամբշնալ, կամ, աւելի ճիշդ, սարսափիլ:

Երեկոյեան զովին, երբ Աստուած կը քալէր պարտէզին մէջ, Ադամ եւ Եւա կը լսեն Աստուծոյ ոտնաձայնը եւ Անոր ներկայութենէն կը թաքնուին պարտէզի ծառերուն մէջ (Ծնն. 3:8): Աստուածաշունչը այստեղ Աստուծոյ մարդակերպ կը ներկայացնէ, որը սովորական մարդոց նման ցերեկուան տաքէն յետոյ իրկունները դուրս կ'ելլէր իր կացարանէն՝ զով օդ առնելու: Սակայն, այս պատկերը, ինչպէս նաեւ ամբողջ պատումը, այլաբանական նշանակութիւն ունի. մարդը տակաւին վտարուած, արտաքսուած չէր Եդեմական պարտէզէն, այսինքն՝ Աստուծոյ ներկայութենէն, որովհետեւ ան տակաւին չէր կանչուած պատասխանատուութեան:

Աստուած ձայնեց Ադամին եւ ըսաւ. «Ո՛ր ես»: Ան պատասխանեց. «Պարտէզին մէջ Քու ձայնը լսեցի, վախցայ եւ պահուրտեցայ, քանզի մերկ եմ»: Իսկ Տէրն ըսաւ. «Ո՛վ ըսաւ քեզի, թէ դուն մերկ ես: Կերա՞ր արդեօք այն ծառէն, որմէ պատիրած էի քեզի չուտել»: Ադամը պատասխանեց. «Այն կինը, որ Դուն տուիր ինծի, ան տուաւ ինծի այդ ծառէն, եւ ես կերայ»: Եւ Տէրը՝ Աստուած, ըսաւ կնոջը. «Այդ ի՞նչ ըրած ես»: Կինը պատասխանեց. «Օձը խաբեց զիս, ես ալ կերայ» (Ծննդ. 3:9-13):

Սիրելիներ, Ադամ եւ Եւա կը պահուէին ծառերու մէջ՝ ոչ թէ խուսափելու համար պատասխանատուութենէ, այլ անոնք այդ կ'ընէին յատկապէս սարսափելով իրենց մերկութենէն, հոգ չէ թէ թզենի տերեւներով ծածկած էին իրենց ամօթոյքը: Ատոր համար ալ Ադամ կ'ըսէ. «Վախցայ եւ պահուըտեցայ, քանի որ մերկ եմ»: Ան կը զգար, թէ ինք որքան խեղճ ու տկար է՝ ի դիմաց Աստուծոյ զօրութեան եւ իմաստութեան:

Աստուծոյ զօրութիւնը, սակայն չի բռնադատէր մարդը: Այլ առիթ կու տայ խօսելու եւ ինքզինք պաշտպանելու: Այս իմաստով է, որ Աստուածաշնչեան գրիչը կը մէջբերէ Աստուծոյ եւ մարդուն միջեւ կատարուած այս երկխօսութիւնը: Իր պատասխանին մէջ մարդը ինքզինքը կը մատնէ. այնքան ատեն, մինչեւ որ ան պատուիրանազանց չէր եղած ու չէր բաժնուած Աստուծոյ շնորհէն, չէր իմացած իր մերկութիւնը: Ան մեղքը նետեց կնոջ վրայ եւ նոյնիսկ, աւելի առաջ երթալով, Աստուծոյ նկատեց իր դժբախտութեան բուն պատճառը՝ ըսելով. «Այն կինը, որ Դուն ինծի տուիր, ան տուաւ ինծի...»:

Աստուած այլեւս ըսելիք չունի մարդուն: Այժմ ան իր խօսքը կ'ուղղէ կնոջը: Սակայն ան ալ իր կարգին պատասխանատուութիւնը կը նետէ օձին վրայ, որմէ յետոյ Աստուած կու տայ իր վճիռը. կ'արտաքսէ Եդեմական պարտէզէն, որպէսզի մշակէ այն հողը, որմէ առնուած էր:

Քրիստոնեայ հեղինակ մը պատկերաւոր ոճով կը պատմէ, թէ երբ Յիսուս խաչին վրայ հոգին աւանդելէ ետք իր ոտքը դրաւ մեռելներու աշխարհին մէջ՝ դժոխքի սահմաններէն ներս, նախամարդը՝ Ադամ, դարձեալ լսեց անոր ոտնաձայնը: Ան ըսաւ, թէ «ասիկա ինծի ծանօթ ոտնաձայն է, որ լսած էի դրախտին մէջ, երբ իններորդ ժամուն Աստուած կը ճեմէր ու զիս փնտռեց»:

Ադամի մենախօսութիւնը սակայն, դրական է եւ յուսադրիչ: Ան կ'ըսէ, թէ «միայն ստուգեմ որ Աստուծոյ ոտնաձայնն է ատիկա, այլեւս չեմ վախնար, ինչպէս վախցայ դրախտին մէջ, որովհետեւ,- կ'ըսէ,- Ան զիս պիտի պատուէ, պիտի ջնջէ դատապարտութեանս գիրը, անէծքը պիտի վերցնէ, արցունքներս պիտի սրբէ, տրտմութիւնը ու րախութեան պիտի փոխակերպէ, մահը պիտի հալածէ, ու մեռածներուն յարութեան յոյս պիտի պարգեւէ»: Այլեւս երբ Աստուած ձայնէ ինծի ըսելով. «Ո՛ր ես Ադամ», «չեմ պահուըտիր, ոչ ալ թզենիով կը ծածկուիմ, այլ բացայայտօրէն կը կանգնիմ անոր դիմաց: Այլեւս,- կ'ըսէ,- չեմ պատճառաբաներ ըսելով թէ այդ կինը որ ինծի տուիր, ան խաբեց զիս ու մահացայ, այլ կ'ըսեմ, թէ անոր սերունդէն եղող ուրիշ մէկ աղջկան՝ Մարիամին միջոցաւ յարութեան ձայնը լսեցի ու կենդանացայ»: Եւ այսպէս շարունակելով իր մենախօսութիւնը, Ադամ կ'ըսէ, «Աստուած ինծի պիտի չըսէ՝ «Հող էիր, հող դառնաս», այլ՝ պիտի ըսէ. «Թէպէտ դրախտէն վտարուեցար, սակայն հիմա դարձեալ դրախտ պիտի մտնես»:

Մինչ Ադամ այսպիսի մտածումներու մէջ էր, Յիսուս հետզհետէ կը մօտենայ իրեն, ու ինք կը լսէ անոր ոտնաձայնը շատ մօտէն: Ապա անոր ձայնը. «Ո՛ր ես, Ադամ»: Բայց շուտով կը շարունակէ ան ըսելով. «Մի՛ վախնար, ոչ՛ ալ պահուըտիր, թզենիով ալ պէտք չունիս ծածկուելու, որովհետեւ այնպէս ինչպէս դուն ծառին պատճառով դատապարտուեցար, ես ալ փայտին վրայ խաչուելով շարշարուեցայ ու մահացայ, որպէսզի քեզի ազատեմ այստեղէն: Մի՛ ամչնար ու երեսդ մի՛ ծածկեր ինձմէ, որովհետեւ քու փոխարէնդ իմ երեսիս վրայ ես թուք ստացայ արդէն, որպէսզի քու երեսդ արեգակէն աւելի փայլուն, եւ ճակատդ միշտ բարձր ըլլայ: Մի՛ սարսափեր, որովհետեւ թէպէտ ձեռքերովդ առիր ծառին պտուղէն ու կերար, իմ ձեռքերս քուկիներուդ փոխարէն,

խաշին վրայ գամուեցան: Դուռն կենաց ծառին պտուղէն կերար ու կեանքդ դառնացաւ, իսկ ես քու փոխարէնդ լեղին խմեցի խաշին վրայ, քու բերանդ անուշցնելու համար: Ի վերջոյ Ադամին կ'ըսէ, որ բնաւ մի՛ ափսոսար մահուամբ գերեզման դրուելուդ համար, որովհետեւ ես քեզի համար գերեզմանի մէջ դրուեցայ, որպէսզի քեզ՝ թաղուածդ, վերակենդանացնեմ:

Ադամ այս ամէնը լսելէ ետք բարձրաձայն կը խոստովանի Տիրոջ, թէ առաջին անգամ լսած ձայնը դրախտին մէջ, սոսկում պատճառած էր իրեն, սակայն երկրորդը դժոխքին մէջ՝ ուրախութիւն...: Առաջին ձայնը լսելուն, մերկացած ըլլալով աստուածային շնորհներէն, ամէցած էր, սակայն հիմա ամշնալու պատճառ չունէր, երբ Աստուած զինք վերստին զարդարած էր երկնային շնորհներով, ու մանաւանդ անմահութիւնը տալ կը խոստանար:

Տիրոջ հետ իր երկխօսութեան աւարտին, Ադամ դժոխքին մէջ ոտքի կ'ելլէ ու համարձակօրէն կը ձայնէ բոլոր մեռելներուն ըսելով. «Մեռելներ, լսեցէ՛ք աւետիսի այս ձայնը: Դուք որ իմ պատճառովս մահը ճաշակեցիք, ահաւասիկ դարձեալ իմ միջոցովս ազատութեան աւետիսը կը տրուի ձեզի: Ան որ զիս մերկացուց երկնաւոր շնորհներէ, այսօր վերստին կը զգեցնէ ինծի այդ շնորհները, ու իր դառն բարկութիւնը ուրախութեան փոխակերպելով, դրախտի վայելքը վերստին տալ կը խոստանայ:

Ադամի այս խօսքերը լսելով, բոլոր նահապետներն ու մարգարէները ոտքի կ'ելլեն՝ Աբէլ, Նոյ, Աբրահամ, Մելքիսեդէկ, Իսահակ, Յակոբ, Յովսէփ, Դաւիթ, Եսայի, Ամբակում, Երեմիա, Միքիա, Յովէլ, Բաղաամ, Զաքարիա, Սիմէոն ու Յովհաննէս: Անոնցմէ իւրաքանչիւրը իր կատարած առաքելութեան լրումը կը տեսնէ Քրիստոսի անձին մէջ, եւ կը յուսադրուի անկէ գալիք ապագայ փառքով:

Սիրելիներ, Յիսուսի ոտնաձայնը, նոյնիսկ դժոխքին մէջ, յոյսի ոտնաձայն է: Աստուծոյ ներկայութիւնը ամէն տեղ ունինք մեր կողքին: Կը բաւէ միայն ականջ տալ եւ անպայման պիտի լսենք անոր ոտնաձայնը: Մեր կատարած աստուածապաշտութեան ընթացքին թէ անկումի պահերուն, Յիսուսի ոտնաձայնը կարելի է լսել մեր կողքին: Ան մեզի հետ կը քալէ միշտ, նոյնիսկ երբ կը մեղանշենք այս աշխարհին մէջ: Ճիշդ է, երբեմն անոր ոտնաձայնը կը վախցնէ մեզի, կը պահուրտինք անոր աչքէն, կարծելով որ չի տեսներ մեզի: «Ծառերու» ետին կը մտնենք, կամ «թզենիով» կը փորձենք ծածկուիլ, սակայն Աստուած մեզի կը տեսնէ միշտ, ու մեր չականկալած պահուն կրնայ փնտռել մեզի, ու կանչել ըսելով. «Ո՛ր ես...»:

Աստուծային այս փնտտութիւն դիմաց քաջաբար կենալու համար, պէտք է միշտ ականջ տալ Յիսուսի ոտնաձայնին: Մեր քայլերուն համահունչ է Յիսուսի ոտնաձայնը, որովհետեւ մեր շուքին պէս կը հետեւի մեզի, ու բնաւ չի հեռանար մեր մօտէն:

Սիրելիներ, Իր երեքօրեայ թաղմամ, Յիսուս դժոխքին մէջ ուրախութիւն ստեղծեց՝ ազատագրելով նախահայրերուն հոգիները: Իսկ երկրաւոր դժոխքին մէջ, մարդկութեան առօրեայ կեանքին մէջ Յիսուսի ոտնաձայնին ականջ տուող կա՞յ արդեօք: Ոմանք կը լսեն Յիսուսի ոտնաձայնը ու զայն կ'ընդունին միայն իբրեւ պահապան իրենց կեանքի, յատկապէս նեղութեանց ու փորձութեանց պահերուն: Սակայն, անոր ոտնաձայնը լսելը, մեզի պարտաւորութեան դիմաց կը դնէ, որ է՝ հետեւիլ անոր քայլերուն: Կը լսե՞ս Յիսուսի ոտնաձայնը: Եթէ ոչ, լուռ կեցիր եւ անպայման պիտի լսես: Ուրեմն հետեւէ՛ իր քայլերուն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: